Այս տեղ ինձ կը թուի, որ ոչ պատերազմի երկիւղից՝ այլ հացի ու ջրի պակասութիւնից ամրոցի դռները բացին, անձնատուր եղան։

«Իբրև ետես Վասակ թէ այնպիսի և այնչափ հնարիւք ոչ կարաց խափել զհայս յորդորել զՄուշկան Նիսալաւուրդ էառ ի նմանէ զօր բազում և խաղաց ի միջոց աշխարհին և հասեալ ի Կապոյտ լեառն՝ մարտեան ընդ մուտն Արտագերից։ Իսկ որք ի ներքս էին քաջութեամբ պատերազմեալ հարին զրազումս ի պարսից և զմնացեալսն արկին փախստական ի բուն բանակն իւրեանց»։

Ըստ իմ կարծեաց որպէս վերև ասացի Արտագերից լինելու է այժմեան Մատուռ և Թէքքէ-Բինէ ասուած հարիւրապատիկ անգամ Կապուտից աւելի անառիկ բերդն և անառառն, կարող եմ ասել այժմ էս բոլորովին անառիկ է, «Ընդ մուտն Արտագերից» խօսքն էս ապացոյց մի է, որ Թէքքէ-Բինէի բերդն թէև Մատուռայ ջրի մօտ կընկնի յարևմուտս կոյս 2 ժամ հեռի, սակայն մուտքը ելքը Կապուտայ կողմից է։ Արդէն երկու նեղ և դժուարամատչելի ճանապարհով 3 ժամից հաղիւ գագաթն բարձրանալ կարելի է, գագաթը, որպէս վերը տեսանք 15—50,000 ընտանիք պատսպարող մի հսկայ անառառ է, Հայաստանի արիւնալից միջոցին բնականաբար այդ տեղ պիտի ապաւինէին որպէս զի ապահով լինէին, ջուր և վառելիք ունենային, միայն հացը պիտի պակասէր այն էս կարելի է հիւսիսային կողմից բարձրացող գաղտնի ճանապարհով հոգայուէր։

Այս լեառը բնութիւնը պատերազմի համար ստեղծած լինելուն՝ ժայռերն անգամ պաշարող բանակին թշնամի պիտի դառնային, հազար հատ վասակ անգամ